ՀՏԴ : 929:891.981Թումանյան

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ*

Ապրիլի 12–14-ին Երևանում տեղի ունեցավ Հովհաննես Թումանյանի մահվան 100-րդ տարելիցին և հիշատակի ոգեկոչմանը նվիրված հանրապետական գիտաժողով, որը կազմակերպել էին ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը (ԳԻ), Երևանի պետական համալսարանը (ԵՊՀ), Հովհաննես Թումանյանի թանգարանը (ՀԹԹ), Հայաստանի գրողների միությունը (ՀԳՄ):

Գիտաժողովը բացվեց ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում: ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանն *իր խոսքում արժևորեց Հովհ. Թումանյանի հասարակական գործունեությունն ու գրական ժառանգությունը և կարևորեց գիտաժողովի նշանակությունը՝ որպես նոր ուսումնասիրությունների մեկնակետի: Նա նշեց, որ գիտաժողովի կազմակերպման աշխատանքներում իր մեծ ներդրումն է ունեցել ԳԻ տնօրեն, բ. գ. դ.* Վարդան Դևրիկյանը*:*

Ողջույնի խոսքով հանդես եկան նաև ՀԳՄ նախագահ Էդվարդ Միլիտոնյանը*, ԳԻ փոխտնօրեն, բ. գ. թ.* Հերիքնազ Որսկանյանը*, որը ներկայացրեց ինստիտուտի տնօրեն Վ. Դևրիկյանի ուղերձը, ԵՊՀ Հ. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի պրոֆ., բ. գ. դ.* Սամվել Մուրադյանը*, ՀԹԹ տնօրեն, բ. գ. թ.* Անի Եղիազարյանը*, Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագիր, քիմ. գ. դ.* Հովհաննես Այվազյանը*, ԳԻ առաջատար գիտաշխատող, բ. գ. դ.* Ալբերտ Մուշեղյանը*:*

Լիագումար նիստում լսվեց չորս զեկուցում: ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բ. գ. դ., պրոֆ. Աելիտա Դոլուխանյանը *ներկայացրեց «Հովհ. Թումանյանի մանկագրության առանձնահատկությունները» թեմայով զեկուցումը, լսվեցին բ. գ. դ., պրոֆ.* Ավիկ Իսահակյանի՝ *«Հանճարի ավագ դուստրը. Աշխեն Թումանյան», բ. գ. դ., պրոֆ.* Ազատ Եղիազարյանի՝ *«Վեճ երեք թումանյանագետների հետ «Թմկաբերդի առումը» պոեմի գնահատման շուրջ», բ. գ. դ., պրոֆ.* Հենրիկ Էդոյանի՝ *«Պուշկինի «Ջմեռվա իրիկունը» բանաստեղծության թումանյանական թարգմանությունը» խորագրերով զեկուցումները:*

Այնուհետև գիտաժողովի աշխատանքները շարունակվեցին ԳԻ-ում: Զեկուցումներով հանդես եկան՝ բ. գ. դ., պրոֆ. Մադլենա Ջանփոլադյանը *(«Ռուս քննադատությունը Հովհ. Թումանյանի բանագիտական սկզբունքների մասին»), բ. գ. դ., պրոֆ.* Սուրեն Դանիելյանը *(«Թումանեանը՝ «կոտախնձոր» բանաստեղծական աւանդոյթի եւ գալիք օրերի բախումներում»), բ. գ. դ.* Անուշավան Զաքարյանը *(«Դավիթ Անանուն և Հովհաննես Թումանյան. գրական-հասարակական առնչություններ»), բ. գ. դ.* Պետրոս Դեմիրճյանը *(«Հովհաննես Թումանյանի անհատականությունն ու ստեղծագործությունը՝ Հրանտ Թամ-*

---

* *Ներկայացվել է 02. IV. 2023 թ., ընդունվել է տպագրության 19. VI. 2023 թ.:*

բազյանի գնահատությամբ»), բ. գ. դ., պրոֆ. Վանո Եղիազարյանը *(«Մի քանի դիտարկումներ «Բզեզի դպրոցը» փոխադրության շուրջ»), բ. գ. դ.* Մարգարիտա Խաչատրյանը *(«Հովհաննես Թումանյան և Համաստեղ. հեքիաթի երկու մշակում»), բ. գ. թ., դոցենտ* Վահան Նավասարդյանը *(«Հովհ. Թումանյանի տաղաչափական արվեստը»), բ. գ. դ., դոցենտ* Եվա Մնացականյանը *(«Մ. Խոստիկյանի «Կրոնափիլիսոփայականը Հովհ. Թումանյանի բանաստեղծությունների մեջ» խորագրով հոդվածի շուրջ»), բ. գ. թ., դոցենտ* Թեհմինա Մարությանը *(«Հովհաննես Թումանյան–Ակսել Բակունց. կենսագրական նոր փաստեր և առնչություններ»), բ. գ. թ., դոցենտ* Քնարիկ Աբրահամյանը *(«Թումանեան արուեստագէտը արեւմտահայ նամակագրութեան մէջ») և բ. գ. թ.* Գայանե Աթանեսյանը *(«Անցավորի և անանցի թումանյանական ընկալումը»):*

Ապրիլի 13-ին գիտաժողովի աշխատանքները շարունակվեցին ԵՊՀ-ում: Իրենց զեկուցումները ներկայացրին բ. գ. դ., պրոֆ. Սամվել Մուրադյանը *(«Հովհ. Թումանյանը և «մեծ հավերժի ձևերը»»), բ. գ. դ.* Սուսաննա Հովհաննիսյանը *(«Հովհաննես Թումանյանի քաղաքագիտական դիրքորոշումների գրական և գործառական դրսևորումները 20-րդ դարասկզբին»), բ. գ. թ., դոցենտ* Նվարդ Վարդանյանը *(«Հովհ. Թումանյանի կուտակային հեքիաթների և ծիսերգային բանահյուսության որոշ զուգահեռներ»), բ. գ. թ., դոցենտ* Գրիգոր Ղազարյանը *(«Տարածության ընկալման նշանագիտական հայեցակերպը «Լոռեցի Սաքո» պոեմի օրինակով»), փ. գ. թ.* Դավիթ Մոսինյանը *(«Հ. Օշականը Հ. Թումանյանին դեմ հանդիման»), պ. գ. թ., դոցենտ* Հասմիկ Հարությունյանը *(«Արյան վրեժը հայոց մշակույթում՝ ըստ Հովհ. Թումանյանի ստեղծագործությունների»), սոցիալ-մշակութային գործունեության մագիստրոս* Արմեն Այվազյանը *(«Նոր բացահայտումներ Թումանյանի 1921 թվականի հասարակական գործունեությունից»):*

Գիտաժողովի երրորդ՝ եզրափակիչ նիստը, տեղի ունեցավ ապրիլի 14-ին ՀԹԹ-ում: Զեկուցումներով հանդես եկան բ. գ. թ. Անի Եղիազարյանը *(«Հովհ. Թումանյանի՝ Մաշտոցյան Մատենադարանում պահպանվող հավաքածուն»), բ. գ. թ., դոցենտ* Աբգար Ավինյանը *(«Հովհ. Թումանյանի պոեզիան ժամանակակից նշանագիտության լույսի ներքո»), բ. գ. թ.* Կարինե Առաքելյանը *(«Ժողովրդական հեքիաթները Հովհաննես Թումանյանի և Նշան Պեշիկթաշլյանի մշակումներում»), բ. գ. թ., դոցենտ* Սիրանուշ Մարգարյանը *[«Սրբազան ամուսնության միֆոլոգեմը եվրոպական գրականության մի քանի գործերում և Թումանյանի «Ախթամար»-ում (զուգադիր քննության փորձ)»], բ. գ. թ., դոցենտ* Նունե Մկրտչյանը *[«Հովհ. Թումանյանի նամակներում (1885–1900) արծարծված մի քանի հիմնահարցերի քննություն»], բ. գ. թ.* Արմեն Մանուկյանը *[«Երկու ճշտում «Հովհ. Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրության (1869–1908)» վերաբերյալ»]:*

Գիտաժողովի ավարտին Ամենայն հայոց բանաստեղծի հիշատակին մատուցվեց հոգեհանգստյան կարգ:

ԵՎԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ